

ՈՒՐՈՒԱԳՅԵՐ 20-ՐԴ ԴԱՐԻ ԼԵՅԱՅԱՅ ԳԱՂՈՒԹԻ

Լեհաստանի հայ դաղթավայրերի մասին խօսելիս մեզանում գլխավորապես ի նկատի են ունեցել միջնադարը, մասամբ նաեւ ժԹ դարը. նոր ժամանակների լեհահայութեանը դրեթէ չեն անդրադարձել: Այնինչ առաջին աշխարհամարտին նախորդող եւ, մանաւանդ, յաջորդող տարիներին՝ մինչեւ երկրորդ աշխարհամարտի սկիզբը, այդ դաղութը դարթօնքին մերձեցող աշխուժութիւն է արձանագրել. ստեղծուել են նոր կազմակերպութիւններ, միութիւններ, մամուլ եւ մշակոյթի այլ օջախներ:

Սովետական առանձին պատմաբաններ¹, լեհահայ դաղութիւն վերաբերող յօդուածներում հարեւանցիորէն անդրադարձել են նաեւ 20-րդ դարի լեհահայութեանը, որը չափազանց քիչ է՝ լեհահայ դաղութի պատմութեան այդ փուլի մասին պատկերացում կազմելու համար: Յօդուածում դիտարկում ենք մեր պատմագիտութեան մէջ չ'արժարժուած մի շարք փաստեր, որոնք կարող են նպաստել լեհահայ դաղութի ամբողջական պատմութեան մշակմանը:

Ինչպէս յայտնի է, Լեհաստանը ինքնուրոյնութիւնը կորցրեց 1795 թ. վերջին բաժանումից յետոյ, երբ մասնատվեց Ռուսաստանի, Պրուսիայի եւ Ավստրիայի մէջ: Առաջին աշխարհամարտի վերջին (1918 թ.),

¹ Գ. Ս. Միզինենկոյ «Լվովի գիտութեան ու մշակոյթի հայ գործիչները» «Իստորիչեսկիյէ սվյազի ի դրուժբա ուկրաինսկոյո ի արմիանսկոյո նարոդով»: Ռուսերէն յօդուածների ժողովածոյ, այսուհետեւ՝ ԻՍԴ (Երեւան, 1971 թ., էջ 170—177): Ե. Ա. Եաշկեւիչ. «Լվովի հայկական մշակութային յուշարձանները» (ԻՍԴ—1961, էջ 121—130): Ն. Կ. Կրիվոնոս, «Հայերը Լվովի մշակութային կեանքում» (ԻՍԴ—1961 թ., էջ 132—139): Է. Սարգսեանի յօդուածները լեհահայ գործիչներին նուերուած յուշամեղադրերի մասին՝ «Լրաբեր հասարակական գիտութիւնների» (1969 թ., նո. 2, 1979 թ., նո. 1) Զ. Գալստեանի, Վ. Գրեզորեանի, Մ. Յովհաննիսեանի, Գ. Պինդիլեանի, տողերիս հեղինակի եւ այլոց մենագրութիւնները, յօդուածները, զրախօսակցանքն ու լրագրային հաղորդումները Լեհաստանում տպագրուած հայագիտական աշխատութիւնների ու հայ գրականութիւնից արուած թարգմանութիւնների մասին:

լեհերը, 123 տարուայ անկախութեան կորուստից յետոյ, վերականգնեցին իրենց պետականութիւնը:

Լեհահայերը այդ պատերազմին ահապին դժուարութիւններ էին կրել, կորցրել էին հսկայական հարստութիւններ, հողեր եւ նւթական այլ արժէքներ, խարխուլել էր նրանց ինքնավարութիւնը եւ թոււում էր, թէ ապրում են իրենց վերջին հոգեվարքը: Բայց ահա, Լեհաստանի անկախութեան հռչակումից մի քանի տարի անց, արդէն 20-ական թթ. սկիզբին, հայերէն խօսելը դեռ ժԼ-րդ դարից մոռացած լեհահայերը դարձեալ սկսում են վերակենդանացնել իրենց վաղեմի ինքնավարութիւնը: Լվովի հայոց եկեղեցութեմական խորհուրդը աւելի շատ երիտասարդ քահանայացուներ է ուղարկում Վրեննա՝ Միթարեանների մօտ հայերէն կրթութիւն ստանալու: Աշխուժանում է հայագիտութիւնն ու Լեհաստանի հայ դաղթավայրերի ուսումնասիրութիւնը: 1920—1938 թթ. ըլլա են տեսնում Դ. Կայետանովիչի, Բր. Վուլչիկ-Քէօփրուլեանի, Լ. Պարեւելզովայի, Թ. Գրոմնիցկոյ, Բ. Եանուշի, Յ. Պիտորովսկոյ, Ա. Թէոդորովիչի, Վ. Ժըւէի, Լ. Կորվինի, Լ. Թէոդորովիչի, Յ. Սոչեկի, Զ. Լեւիցկոյ, Ա. Զոլովսկոյ, Զ. Պովանիչիցի, Թ. Մանկովսկոյ, Ս. Ռաւվալի, Ա. Ենջէեւսկայի, Վ. Հէյնոշի եւ այլոց՝ մօտ 40 զբոյցիչներն ու հետազօտութիւնները՝ չհաշուած լեհահայ եկեղեցիների պէտքերը հողացող բազմաթիւ զբոյցիչներ, ծանուցարաններ (պրոսպեկտ), սրբապատկերների վերատպութիւններ ու բացիկներ, ինչպէս նաեւ լեհագիր բանաստեղծներից մի քանիսի ժողովածոյները (Ստ. Բարոնչի հատնըրըրը եւ նշանաւոր թատերագիր ու բանաստեղծ Իդնացի Նիկորովիչի գործերն օրինակ): Լվովի ձայնակայանից հաղորդում էին լեհահայոց երգերի նմոյշներից, երբեմն նաեւ հայկական թեմաներով ռադիօբեմադրութիւններ: Լեհական «Վսխուդ ի Օրիենտ», «Ռոչնիկ Օրիենտալիստընի», «Կվարտալնիկ հիստորիչնի» եւ ուրիշ գիտական հանդէս-

ներում վերոթուեալ եւ այլ հեղինակները տպագրում էին հայագիտական յօդուածներ:

18—19 տարում այսքան գրքեր ըլլա տեսնելն արդէն ցոյց է տալիս, թէ ինչ թափով էր առաջ գնում լեհահայոց դարթօնքը: Առանձնապէս կարեւոր դործ է կատարել Լվովում ըլլա տեսնող «Պոսլանիէց Շվիենտիէզո Գոթեպոժա», «Սուրբ Գրիգորի սուրհանդակ» պարբերականը (դաղարեց պատերազմի սկզբին), որի իւրաքանչիւր համարում տպագրում էին նաեւ Հայաստանի ու սփիւռքի վերաբերեալ մշակութային լուրեր: «Պոսլանիէց»ի հիմնական նպատակը լեհահայերի ազգային ինքնագիտակցութեան բարձրացումն էր, ուստի իր էջերում յաճախակի էին յօդուածները լեհահայոց անցեալի, բանահիւսութեան, երաժշտութեան, հայ առաքելական եկեղեցու ծէսերի, հայկական ժողովրդական ու ազգային երգերի², լեհահայ նկարչութեան, արհեստների մասին, ինչպէս նաեւ այն գործիչների վերաբերեալ, ովքեր մասնակցել են Լեհաստանի մշակութային ու տնտեսական առաջընթացին: Արդարութիւնը պահանջում է ասել, որ ամսագիրը երբեմն ծայրայեղութիւնների մէջ էր ընկնում: Այս

² Posłaniec Świątego Grzegorza-ն հիմնուել է 1927 թ. յունիսին. ըլլա էր տեսնում մեծ մասամբ 2—3 միաւորուած համար՝ 2 կամ 3 ամիսը մէկ: Անխափան գործել է մինչեւ 1934 թ. դեկտեմբերը: 1935—37 թթ. հանդէսը ըլլա չի տեսել, բայց որպէս լեհահայոց «Գրեզորիանա» նորարաց հանդէսի յաւելուած («Գրեզորիանա» զուտ եկեղեցական պարբերականը ըլլա է տեսել 1935—1938 թթ.ը՝ Ազամ Բոգդանովիչի խմբագրութեամբ)՝ «Թեմական գործեր» վերնագրով շարունակել է դոյատեւել մինչեւ «Գրեզորիանայի» դաղարեւը որից յետոյ կրկին վերահրատարակուած է հին անունով, բայց արդէն որպէս եռամսեայ հանդէս եւ վերջապէս դաղարում 1939 թ. սեպտեմբերին: Պարբերիչ էլ լեհահայ քահանայ, հասարակական եւ մշակութային գործիչ, բանասէր Դիոնիս Կայետանովիչը:

³ Ամսագիրը Դ. Կայետանովիչի, Կար. Քէօփրուլեանի, Ստ. Բարոնչի եւ այլոց թարգմանութիւններով, ձայնագրեալ ընդգրկում հանդերձ, տպագրում էր հայկական հոգեւոր («Քահանայը», «Քրիստոս յարեալ» եւ այլն.) ու աշխարհիկ երգեր (օր. «Ծիծեռնակ», «Մի լար, սոխակ», «Հայաստան»), որոնք հնչել են նաեւ Լվովի ձայնակայանից՝ հայկական խառը մանկական երգչախումբի կատարմամբ (զեկ. Ազամ Բարբաբոյ), ինչպէս նաեւ Արովեան-Կուրնատովսկայի կատարմամբ: Վերջինս, ծնունդով թիֆլիսեցի հայուհի, համարում էր լեհական ձայնակայանի շնորհալի սոպրանոներից (տես Պոսլանիէց, նո. 55, էջ 175, 185, 188):

իմաստով հետաքրքիր է Աղ. Միցկեւիչից յետոյ ժԹ դարի լեհ մեծագոյն բանաստեղծ-թատերագիր Եուլիուշ Սլովացկու զէպըր (1809—1848): Նա մահացել ու թաղուել էր Փարիզ: 1927 թ., լեհական կառավարութեան որոշմամբ, բանաստեղծի սակորները բերում են թաղելու ՎԱՎԵԼ բերդի պանթէոնում (Կրակով): Մարդարանական հետազօտութեան ենթարկելուց յետոյ, նշանաւոր մարդարան, Լվովի համալսարանի ուսուցչապետ Ե. Տալկոյ-Հոլնցեւիչը առաջ քաշեց Սլովացկու գանդի արմենոիդ լինելու վարկած: Մինչ այդ, Սլովացկու երկերի լիակատար ժողովածոյի առաջին հրատարակիչ, լեհ ակադեմիկ բանասէր եւ գրականագէտ, ակադ. Ե. Քլեյները, բանաստեղծի մասին գրած քառահատոր ուսումնասիրութեան մէջ J. Kleiner «Juliusz Słowacki» T. 1—4, 1919—1927, Lwów) վկայակոչելով Սլովացկու քերթութեան՝ արեւելեանին յատուկ գունագեղութիւնը ու հարուստ երեւակայութիւնը, ինչպէս նաեւ «Կրուլ դուխ» (ոգու արքան) կենսագրական անավարտ պոեմի հերոս Հերա արմենչիկ կերպարը (արմենչիկ՝ լեհերէն հայ), որը բանաստեղծի մարմնավորումն է այդտեղ, ենթադրել էր Սլովացկու հայկական ծագումի հնարաւորութիւնը⁵: Լեհահայերը մի քայլ առաջ գնացին՝ Սլովացկու հայկական ծագումը բխեցնելով բանաստեղծի մօրական պապից (Եանուշեւսկիներ)՝ ակնարկելով նաեւ հայրական կողմը. «... Յայտնի է, որ Մալոպոլսկայում (Սլովացկին ծնվել էր Մալոպոլսկային յարող Կթեմիենիէց աւանում, այժմ՝ Ուլիբ. ՍՍՀ Տարնոպոլի մարզ, քաղ. Կրեմենէց: Ռ. Հ.) կայ Եանուշեւսկիների տոհմ, որոնք իրենք են պնդում, թէ ծագումով հայ են...: Յիշարժան է նաեւ փաստը, որ Լվովի հայոց Խսակովիչ արքեպիսկոպոսի մայրը՝ Ռիփսիմէ Սլովացկան եւս հայուհի է եւ հաւանաբար ծնուել էր Հէնց Կթեմիենիէցում»⁶:

⁴ Przegląd Antropologiczny, T. III, Zeszyt 1—2R, 1928 (համար՝ Posłaniec Św. Grzegorza, թիւ 13—15 էջ 103, 1927 թ., Լվով):

⁵ Այս խիստ վիճելի վարկածը մեզանում կարծես դարձել է հաստատուած ճշմարտութիւն: Առանձնապէս զարմացնում է ուկրաինական պատմաբան Գ. Սիլեկենկոյի յօդուածը, որտեղ, առանց հիմքի նա յայտարարում է, թէ Սլովացկու մայրը հայ էր (տես ԻՍԴ—1971, էջ 170):

⁶ Posłaniec Św. Grzegorza, թիւ 13—15, էջ 103, 1927 թ., Լվով (այսուհետեւ՝ «Պոսլանիէց»):

Լեհական նշանաւոր դիտնական էր Իգնացի Լուկասեւիչը*, որի ծննդեան 150 ամեակը մեծ շուքով Լեհաստանը նշեց 1972 թ.։ Նա 1853—54 թթ. աշխարհում առաջինը ըստեղծեց նաւթի լամպը եւ դարձաւ Լեհաստանի նաւթարդիւնարերութեան հիմնադիրը⁷։ «Սուբհանդակի» էջերում տպագրուած

* Վիեննայի Միխիթարեան Թանգարանի Մետալներու հաւաքածոյին մէջ կը պահուի Jgnacy Łukasiewicz-ի մետալիոնը, կոխուած 1878ին, Przemysł-ի նաֆթահորերու շահագործման 25 ամեակի առիթով։ Մետա-



լին արամադիծն է՝ 4-70 սմ., հաստութիւնը՝ 0.4 սմ., ծանրութիւնը՝ 50.30 կր., մետաղը՝ Bronze, փորագրողն է՝ W. A. Mallinowski, կոխուած տեղը մեզի անծանօթ։ Ա. կողմի գրութիւնն է՝ JGNACY ŁUKASIEWICZ 1878, Բ. կողմի՝ TWÓRCY PRZEMYSŁU NAFTOWEGO 1878, W 25 TĄ ROCZNICE PRODUCENCI.

ՄԱՆՈՒԹ. Հ. Ա. Ի Խմբագրութեան

⁷ Քանի որ մեզանում այդ գործիչը քիչ է յայտնի, անհրաժեշտ ենք համարում բերել նրա հակիրճ կենսագրութիւնը։ Լուկասեւիչ Իգնացի (Łukasiewicz Ignacy 8 մարտ 1822-7 յունվ. 1882). Գեղագործ, եւրոպական նաւթարդիւնարերութեան հիմնադիրներից, հօր կողմից ծագումով հայ։ 1832 թ. ընդունում է ժեշտով աւանի գիմնազիան, նիւթական միջոցներ չունենալով, չորս տարի ետք թողնում է գիմնազիան եւ դառնում գեղագործի աշակերտ։ Լեհաստանի աղբյուրն-ազատագրական կազմակերպութիւններին մասնակցելուն համար ձերբակալուած է. 1847 թ. բանտից ազատուելուց յետոյ կրկին դառնում է նախկին աշխատանքին։ 1850 թ. բնօրնուում է Կրակովի Եղեղունեան համալսարանի գեղագործութեան բաժինը։ 1852 թ.

յօդուածով Լեհաստանը նշեցին նրա հայկական ծագումը. Լուկասեւիչի մասին եղած հետազայ յօդուածներում եւ գրքերում այդ փաստը չեղաւոր է⁸։

Ամսագիրը մեծ տեղ էր տալիս նաեւ հայ ժողովրդի պատմութեան, մշակոյթի եւ գրականութեան մասին յօդուածներին, որոնցով հանդէս էին գալիս Փարիզի, Վիեննայի, Վենետիկի եւ հայագիտական միւս կարեւոր կենտրոնների հայագէտները։ Իսկ Արշակ Չօպանեանը, որը ուշադիր հետեւում էր գաղութի գործունէութեանը եւ ծանօթ էր գաղութի նշանաւոր գործիչներ՝ Կարապետ Քէօփրիւբեանին, Օ. Թէոդորովիչին, Եուզէֆ Թէոդորովիչին, Ստանիսլավ Բարոնչին եւ այլոց, Ստ. Բարոնչի հետ պայմանագիր է կնքած եղել իր եւ հայ միւս բանաստեղծների քերթուածները վերջինիս թարգմանութեամբ Լեհերէն տպագրելու վերաբերեալ⁹։

Այնպէս որ այս ամսագիրը 19—20-րդ դարերի Լեհաստանի գաղութի ուսումնասիրելու առումով եզակի աղբիւրներից է։

Լեհաստանի աշխուժացման արտայայտութիւններից էր Լվովի հայոց տաճարին կից 1932 թ. բացուած «հայոց պատմական յիշատակարանների ցուցահանդէսը»։ Յուցահանդէսի ուղեցոյցից¹⁰ տեղեկանում ենք, որ դարասկզբին Լեհաստանում մէջ միտք էր

մարտին ժամկէտից շուտ գեղագործի աւարտական է ստանում Վիեննայի համալսարանից։

1852 թ. յունիսին Լվովի գեղատներից մէկում առաջին անգամ ստացաւ թորած նաւթ (կերոսին)։ 1853 թ. ստեղծեց աշխարհում առաջին նիւթի լամպը եւ Լվովի հիւանդանոցներից մէկում անցկացրեց նաւթի լուսատուութիւն, որն այն ժամանակուայ համաշխարհային անխիկայի նուաճումներից էր։

1854 թ. Գորլիցի, Եսալո եւ Բարա աւաններում (Հարաւ-արեւելեան Լեհաստանի Կրոնսդ ընտանապարի մօտ) հիմնեց Լեհաստանում նաւթի առաջին թորանոցներն ու հանքահորերը։

1862 թ. Եւրոպայում առաջինը կիրառեց նաւթահանման ամերիկեան եղանակը (նաւթահորերի փորում)։

1880 թ. Գորլիցիում հիմնեց հանքագործութեան օժանդակմանը եւ զարգացմանը նպաստող նաւթային ընկերութիւնը (Տոլմաժըստովյա Նավթովա զլա Օպիեկի ի սոզլույ գուււնիցովա), որը 1882 թ. հրատարակուած էր իր սեփական «Գորնիկ» (հանքափոր) ամսագիրը։

⁸ St. Brzozowski «Ignacy Łukasiewicz», էջ 5, 1974, Վարշավա։

⁹ Եղ. Չօպանեանի անվ. գրակ. եւ արվ. թանգարան, Ա. Չօպանեանի Փոնդ 3-րդ բաժին թիւ 3180-էջ 3187, 3604, 5126-էջ 5133, նաեւ «Պոսլանիէց...»։

¹⁰ Wystawa Zabytków Ormiańskich, We Lwowie, Լվով, 1932։

յղացել կազմակերպելու մշտական-գործող թանգարան, բայց զանազան դժուարութիւնները եւ մանաւանդ պատերազմը խանդարել էին այդ գաղափարի իրագործմանը։

1927 թուականին Լեհական թանգարանագէտների Վարշավայի 2-րդ համաժողովը միահամուռ հաւանութիւն է տալիս Լվովում հայոց թանգարան հիմնելու Բ. Եանուշի ներկայացրած նախագիծին եւ յատուկ զեկուցադրով Լվովի հայոց եկեղեցու առաջնորդ Ենդէֆ Թէոդորովիչին խնդրում ըստ ամենայնի աջակցել այդ գործին։ Բայց որոշ հանգամանքներ խոչընդոտում են թանգարանի կազմակերպմանը (Լեհաստանը ձգտում են այդ թանգարանում կենտրոնացնել ամբողջ Լեհաստանում մէկ ցրուած հայկական եկեղեցիների եւ հայոց առաջնորդարանների վաղեմի արժէքները, ինչը հասկանալի դիմադրութիւն էր հանդիպում Լեհաստանի միւս քաղաքների թանգարանների կողմից)։

Ի վերջոյ, Տարնուվ քաղաքում հրաւիրուած Լեհաստանի թանգարանագէտների 5-րդ համագումարը յատուկ որոշում է ներկայացնում Լվովի հայոց տաճարին կից «Թեմական թանգարան» կազմակերպելու մասին եւ պատկան մարմիններին պարտաւորեցնում թանգարանը շուտափոյթ կազմակերպել եւ այնտեղ հաւաքել «նախ այն բոլոր նիւթերը, որոնք գտնուում են հայերի հակողութեան տակ», իսկ այնուհետեւ Լեհաստանի այլ թանգարաններից հայոց թեմական թանգարան բերել Լեհաստան գաղութի հին ու նոր պատմութեանն աւելնուող բոլոր նիւթերը¹¹։

Թանգարանն հիմնելու առաջին քայլը 1932 թ. յունիսին 19-ին կազմակերպուած ցուցահանդէսն էր, որը բացուած է¹² շնորհիւ թէ՛ Լեհաստանի առանձին անհատների նուիրատուութիւնների եւ թէ՛ Լվովի թանգարանների, գրադարանների ու քաղաքապետարանի դիւանատան եւ թէ՛ հայկական եկեղեցիների, մանաւանդ Լվովի տաճարի ու տաճարին կից հայոց հարուստ մատենադարանի նիւթերի։ Վերոյիշեալ ուղեցոյցից երեւում է, որ չորս սրահներ ու մի փոքրիկ սենեակ ունեցող ցուցադրութիւնում հաւաքուել էր

¹¹ Նոյն տեղը, էջ 9—10։ Նաեւ «Պոսլանիէց», թիւ 16—17, էջ 126—127, 1928 թ.

¹² Բացմանը ներկայ է եղել նաեւ մեծանուն հայագէտ Հ. Ներսէս Ալիքեանը (տես Բ. Վոյչիկ-Քէօփրիւբեանի յօդուածը յիշած ցուցահանդէսի մասին), «Անահիտ» հանդէս, 1932 թ., թիւ 3—5, էջ 28—53։

մօտ 250 ցուցանմուշ։ Դրանց թւում ժե-ժԸ դարերի 80-ից աւելի նկարներ, սրբապատկերներ, որոնց մէջ Դիւբերեան դըպրոցի գերմանական, ինչպէս նաեւ իտալական ու բիւզանդական վարպետների գործեր։

Յուցահանդէսում ներկայացուած էր լեհ թագաւորների ու իշխանների կողմից հայերին տրուած միջնադարեան վաւերագրեր, պղնձեայ եւ արծաթեայ ժէ, ժԸ դարերի 20—25 զանազան ամանեղէն, փարչեր, սկիւներ, սինիներ, 20-ի չափ՝ հիմնականում ժէ դարի ձեռագիր մատենաներ, շարակնոցներ, վարքագրութիւններ։

Ձեռագրերից 1197 թ. Սկեւոյի (426 մագաղաթեայ էջ) աւետարանն էր՝ գրչապրուած Կիլիկիայի հայոց մանրանկարչական դպրոցի ահանաւոր ներկայացուցիչ Գրիգոր Մլիճեցի ծաղկողի ձեռքով։ Այս հրաշալի նկարագրող ձեռագրի յիշատակարանը պընդում է, թէ այն Լեհաստան է բերել Չատիկի որդի ոմն Թորոս Բերնադենցը 1892 թուին¹³։

Ձեռագիրը մինչեւ 1944 թիւը գտնուելիս է եղել Լվովի հայոց եկեղեցում, հետագայ ճակատագիրն անյայտ է։ Յուցանների մէջ են եղել նաեւ ժՁ դարի աղօթագիրք եւ 1603 թուին Չամոստեցի հայեր Լազարի ու Եւդոկի ձեռքով գրուած-ծաղկած երկու այլ ձեռագրեր։ Թանգարանում ցուցադրուած էին հայկական ու արեւելեան գորգեր, կարպետներ, ժէ—ժԸ դարերում Լեհաստանի գործածած կանացի ու տղամարդկանց ըզգեստներ, վարագոյրներ, ձեռագործ կտորներ եւ այլն։ Յուցանմոյշների մէջ եղած հայկական երեք արծաթապատ-ոսկեզօծ սրերից մէկի դաստակին հայերէն մակագրութիւն կար եւ Ռիւ. (թվ. 1591)։ Յուցասրահներում ցուցադրուած էին նաեւ Լեհաստանի հնատիպ գրքեր, Լեհաստանի ու Պոդոլիայի հայոց եկեղեցիների լուսանկարներ, 1781 թուին տրուած Կուտի հայակերտ ու հայաբնակ քաղաքի յատակագիծը։

Լեհաստանը Լվովում ունէին յատուկ տպարան, դպրոց, գիմնազիա, գրադարան¹⁴,

¹³ Նոյն տեղը, էջ 24։ Նաեւ D. Kajetanowicz, «Katedra Ormiańska i Jej Otoczenie», (Հայոց տաճարն ու իր շրջակայքը) Լվով, 1930, էջ 47—48։

¹⁴ 1936 թ. գրադարանն ունէր 860 կտոր գրականութիւն, որից 600-ը Լեհաստանից եւ հայ ժող. պատմութեանը վերաբերող։ Գրադարանը ստանում էր արտասահմանեան հայագիտական հանդէսներ ու ամսագրեր, որոնց մէջ Ա. Չօպանեանի խմբագրած «Անահիտը», «Բաղմալէպ», «Հանդէս Ամսօրեայ», Արշակ Սաֆ-

լեհական սէյմի ու կառավարութեան մէջ՝ ներկայացուցիչներ (Իսակովիչ, Մանկելիչ, Կժեչոնովիչ, Մանուգելիչ, Դ. Արրահամովիչ, Թէոդորովիչ եւ այլք)։ Լվովի Եան Կազիմիրի անուն համալսարանի արեւելադիտութեան բաժանմունքում 1904—1905 ուս. տարում հիմնուել էր Հայերէնի դասընթացներ, որտեղ շաբաթական երկու անգամ՝ երկուշաբթի եւ ուրբաթ, Կուտեցի Բողդան Դաւիթովիչը (1854—1933) մինչեւ իր մահը զբաղւած էր արեւմտահայերէն էր ավանդում։ Նա 1929—1930 թթ. փոքրիկ պրակներով յայտ է ընծայել «Հայոց լեզուի քերականութեան» եւ «ընթերցանութեան» դասագրքեր՝ իր կազմակերպած դասընթացներին յաճախող ուսանողներին համար¹⁵։

Դաւիթովիչից յետոյ Հայերէն լեզուի դասերը ավանդում էր 1909 թ. Կ. Պոլսից ընտանիքով Լեհաստան գաղթած Կարապետ Քէօփրիւեանը (1884—1939), նա Լվովի Պոլիտեխնիկ բարձրագոյն դպրոցն ավարտելուց յետոյ թէեւ ճարտարագէտի որակաւորում էր ստացել, բայց զուգընթաց ավանդում էր նաեւ Լվովի համալսարանի Հայերէնի դասերը։ 1935—37 թթ. Քէօփրիւեանը Հայերէնի դասընթացներ է կազմակերպել նաեւ Վարչաւայի համալսարանում, որտեղ իր կինը՝ լեհուհի Բրոնիսլաւա Վուլչիկ-Քէօփրիւեանը, երաժշտագիտութեան դոցենտ էր։ 1938 թ. կնոջ մահից յետոյ, Կարապետ Քէօփրիւեանը վերադառնում է Լվով եւ շարունակում Հայերէն դասընթացները մինչեւ մահը։

Լվովում ստեղծագործել են նաեւ լեհահայ բանաստեղծներ ու գրողներ՝ Ստ. Բարոնչը, Վլադ. Էմինովիչը (նա իրեն համարում էր ռումին մեծ բանաստեղծ Էմինեսքուի շառաւիղներից եւ «Սուրհանդա-

կում» Էմինեսքուի հայ լինելու վարկածը պաշտպանող յօդուած էր լոյս տեսցրել)¹⁶, Արգար Սուլթանը (Արգարովիչ), Անտոն Ստեֆանովիչը, Դիոնիզ Կայետանովիչը, նըշանաւոր թատերագիր եւ բանաստեղծ Իդնացի Նիկորովիչը (1866—1951)¹⁷ և 18 եւ միւսները, որոնք նկատելի աւանդ ունեն Լվովի գրական մշակոյթի ասպարէզում։

Լվովի նկարչական արուեստում ներգրում ունեն յայտնի նկարիչ Թէոֆիլ Աքսենտովիչը (1859—1938), ինչպէս նաեւ Կայետան Ստեֆանովիչը, Թադէուշ Բարոնչը (1849—1905), Անտոն Ստեֆանովիչը (1858—1929) եւ ուրիշներ։ Վերջինս Կ. Ստեֆանովիչի հայրն էր, եւրոպահայ արուեստարան եւ մանկավարժ։ Աւստրիական կայսրութեանը լուսաւորութեան նախարարութեան հոգաբարձուն լինելով, այդ երկրի գեղարուեստից ուսուցման արմատաւորել էր ուսուցման իր մշակած նոր եղանակները։ Նրա արուեստագիտական եւ մանկավարժական-տեսական յօդուածները տպագրուել են նաեւ Ֆրանսիայի ու Գերմանիայի գիտական հանդէսներում, ազդեցութիւն թողել այդ երկրների գեղարուեստի դպրոցների ուսումնական ծրագրերի վրայ¹⁹։

Պարբերականը կենսագրական տեղեկութիւններ էր տալիս Լեհաստանի չափանիշներով արուեստագէտ Եան Բոլոգ-Անտոնիէօիչի (1852—1922), լեհահայ ուսուցչապետ Ֆելիքս Թէոդորովիչի (համարում էր լեհական յայտնի սնկարաններից մէկը. նա Լվովում, յետոյ Պոզնանում հիմնել էր սնկերի անձեցման ու դրանց կենսաբանական-բուժական յատկութիւններն ուսուցնասիրողների երկամեայ դասընթացներ), Լվովցի հրոչակաւոր Բժիշկ՝ Լվովի համալսարանի ուսուցչապետ Ռոման Բարոնչի (1856—1930) եւ բազմաթիւ այլ գործիչների մասին։ Վերջինս տարբեր լեզուներով հրատարակած 99 գիտական յօդուածների հեղինակ է, եղել

¹⁶ «Պոսլանիէց» 1928 թ., նո. 16—17, էջ 115—116։
¹⁷ Բ. Դաւիթովիչը լեհ հայագէտ, սանկրիտի մասնագէտ Անդժէյ Գաւրոնսկու (1885—1927) հետ 1920—1926 թթ. աշխատութիւն է գրել Կոստիկ Խոստաձըի մասին, որն այժմ կորած է։
¹⁸ Սա ժժ. դարի լեհական ազգային-հայրենասիրական հոգակաւոր «Սորալի» երաժշտութեան հեղինակ, երաժշտագիր Եուզէֆ Նիկորովիչի (2. ապր. 1827—6. յունվ. 1890) որդին էր։
¹⁹ «Պոսլանիէց», 1930 թ., թիւ 34, էջ 35—45, թիւ 40—41, էջ 150—156, թիւ 38—39, էջ 117—121։

րաստեանի անդլերէն Masis-ը (Լոնդոն), Հռոմում լոյս տեսնող Le Orfane Armene իգական եռամսեայ հանդէսը եւ այլն) «Պոսլանիէց», թիւ 48—49, էջ 87, 92—93, 1931 թ.)։
 Յիշեալ հանդէսների խմբագրների հետ զբաւոր համաձայնութեամբ «Պոսլանիէցը» նիւթեր եւ տեղեկութիւններ էր մատակարարում սփիւռքահայ հանդէսներին՝ փոխադարձաբար նրանցից ստանալով դադիթաշխարհի մասին թղթակցութիւններ արտատրւելու իրաւունք (տես՝ «Պոսլանիէց»ի տպագրւած պատասխանները Զ. Սուրէնեանի ու Ա. Սաֆրաստեանի նամակներին)։ «Պոսլանիէց», թիւ 13, էջ 178—179, 1929 թ.։
¹⁵ «Պոսլանիէց», 1930 թ., նո. 36—37, էջ 103։

է համաշխարհային ճանաչում ստացած վերաբոյժ, 10—12 եւրոպական լեզուներից բացի, ազատ կարդացել-գրել է նաեւ հայերէն։ 1886 թուին Լվովում հիմնել է բուժաբան՝ գլխաւորելով այդ հաստատութեան վիրաբուժութեան բաժինը։ Բարոնչը գործուն մասնակցութիւն է ունեցել դադութի կեանքին, բարոյական ու նիւթական օժանդակութիւն ցոյց տուել լեհահայ կազմակերպութիւններին եւ մշակութային օջախներին։ («Պոսլանիէց», 44, էջ 3—10, 1931 թ.)։

Բազմաթիւ լեհահայեր կարեւոր դերը են կատարել նաեւ Լեհաստանի քաղաքական կեանքում՝ թէ՛ Լեհաստանի անկախութիւնից առաջ եւ թէ՛ անկախութիւնից յետոյ լինելով գերմանական ռայխթագի եւ աւստրիական պառլամենտի, Բուկովինայի ու Գալիցիայի սէյմերի անդամներ, նշանակելի դեր են ունեցել ազատութիւնը կորցրած լեհ ժողովրդի շահերը պաշտպանելու գործում։ Քաղաքական ազդեցիկ գործիչ էր Դաւիթ Արրահամովիչը (1839—1929), նա աւստրիական պառլամենտի լեհական խմբակցութեան պարագլուխներից էր (1875—1918), եւ Գալիցիայի նախարարը (1907—1909), խոշոր գումարներ է նուիրել Գալիցիայում լեհական մշակութային մարմիններ ստեղծելու եւ եղածները ոտքի կանգնեցնելու համար։ Լեհաստանի անկախութեան հռչակումից յետոյ 1919—1922 թթ. ընտրուել է Լեհաստանի սէյմի անդամ։

Ռումինիայում գտնուող Բուկովինայի լեհական գաղութի համբաււոր գործիչներից էր Յակոբ Սիմոնովիչը, որը Սուչաւայում աւարտեց «լեհական տուն» մշակութային հաստատութեան կառուցումը (զբաղարանով)։

Եան Կապրինը Բուկովինայի լեհական գաղութի գլուխներից էր, յիշեալ «լեհական տան» ու գրադարանի նախագահը։

Բոհզանովիչ Գոթեոփը Բուկովինայի լեհերի քաղաքական կազմակերպութեան հիմնադիրն ու առաջնորդն է եղել, լեհական մամուլի նշանաւոր հոլանաւորներից։

Յայտնի գործիչներ էին Բուկովինայի սէյմի լեհական խմբակցութեան պարագլուխներ Բոհզանովիչ Կազիմիրը եւ Քրիստոֆ Արրահամովիչը²⁰։

Լվովում առանձնապէս կարեւոր դերը

²⁰ «Պոսլանիէց», թիւ 31—32, էջ 15—16։

էին ծաւալել լեհահայերի ստեղծած զանազան միութիւններն ու ընկերութիւնները։

1930 թ. նրանք հիմնում են Արրահամովիչի անուն կրթաթոշակ, որով ամէն տարի թէ՛ լեհ եւ թէ՛ հայ չքաւոր երեխաներին ուղարկում էին ուսանելու զանազան ուսումնական հաստատութիւններ։

Լեհահայերի համակենտրոնացման ու նրանց ազգային դարթօնքը խթանող ամենաուժեղ ու տարածուած կազմակերպութիւնը 1929 թ. մարտի 19—ին Լվովում հիմնադրւած «Հայոց թեմական միութիւն» էր, որի 44 կէտանոց կանոնադրութիւնը տպուեց յիշեալ ամսագրի 1930 թ. թիւ 37—ում։ Միութեան նպատակն էր ամբողջ Լեհաստանի հայութեան մէջ ծաւալել կրթական-մշակութային հայանպաստ գործունէութիւն։ Միութեան ստեղծումը արձանագրող կանոնադրութեան տակ ստորագրուել էին Լվովի գրեթէ բոլոր նշանաւոր լեհահայերը՝ թուով 29 հոգի։ 1936 թ. միութիւնն արդէն 428 անդամ ունէր («Գրեգորիանա» հանդէսի յաւելում, թիւ 3—4 [94—95], IX տարի, էջ 129)։

Այն իր առաջ նպատակ էր դրել հիմնելու տպագրի նոր հանդէս. մինչ այդ 1930 թ. մայիսի 1—ից նրա տպագրի մարմինն էր հրոչակում «Պոսլանիէց շվիեստիկոյ Գրեգեոփ»-ն։

Լեհահայոց կրթական գործն ապահովելու առումով մեծ էր 1865 թ. Լվովում հիմնադրուած եւ մինչեւ Բ աշխարհամարտը դոյատեւած «Թորոսիելիչի անուն», հաստատութիւնը»։ Այն բժշկապետ Եուզէֆ Թէոդորովիչի (1785—1869 թթ.) հիմնադրամով կազմակերպել էր լեհահայ մշակութային ու հասարակական նշանաւոր գործիչ Կայետան Կայետանովիչը (1817—1900)²¹։ Այսօրուայ տարրական գիշերօթիկ դպրոցներն յիշեցնող այդ հաստատութիւնն էին ընդունւում չքաւոր լեհահայերի զաւակները, որոնք սովորում, ապրում եւ ճաշում էին «հաստատութեան» հաշուին, Դպրոցը սկզբում կարող էր ընդունել միայն 20 երեխայ, հետագայում՝ մօտ 40։

Լվովում եւ ամբողջ Լեհաստանում մեծ հռչակ է ունեցել 1690—ական թուին (գույցէ

²¹ Նոյն ամսագրում, թիւ 5—6, էջ 31—34, 1927 թ., թիւ 13—15, էջ 90—95, 1928 թ. նաեւ՝ Դ. Կայետանովիչի նշուած աշխատութիւնը, էջ 50—51։

աւելի վաղ) հայուհի Բենեդիկտեանները բացած Օրիորդաց դպրոցը, որը երկար ժամանակ միակ իդական վարժարանն է եղել Լվովում: Հայուհի Բենեդիկտեանները ենթարկուած էին Լվովի հայոց արքեպիսկոպոսին եւ ժամասացութիւնը անում ըստ հայոց կաթողիկէ եկեղեցու ծիսակարգի: 1820 թ. այդ վանքում եղած Մ. Բժշկեանը իր «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» գրքի 101-րդ էջում նշում է, թէ դպրոցն ունէր 400, «երբեմն աւելի» աշակերտուհիներ, որոնք մեծ մասամբ քաջ դիտէին հայերէն (դպրոցի մասին աւելի մանրամասն տես՝ «Սովետական գրականութիւն» ամսագրի 1979 թ., թիւ 9, էջ 138):

Այդ դպրոցին կից՝ 1928 թ. հիմնուեց նաեւ Օրիորդաց գիմնազիա²²:

1792 թուականից մինչեւ 1930-ական թուերի վերջերը Լվովում գոյութիւն է ունեցել Լեհահայերի MONS PIUS²³ կոչուող դը-

²² Նոյնը, 1928 թ., թիւ 16—17, էջ 111—114:
²³ Լատիներէն Mons գոյականը թարգմանուած է՝ 1. լեռ, 2. ժայռ, 3. վէճ, 4. կոյտ. փոխարեական իմաստով՝ նաեւ այն հաստատութիւնը, որտեղ դրամ է կուտակուած որոշակի նպատակով: Այդպիսի դրամատաներ առաջին անգամ երեւան են զարկա ժբ դարից՝ Վենետիկում, որպէս երկարատեւ պատերազմներից դատարկուած պետական դանձարանը լցնելու միջոց:

ԺԳ դարում Ֆրանցիսկեան կաթողիկէ եղբայրութիւնների նախաձեռնութեամբ Իտալիայում Mons-եր են հիմնուած Ֆրանցիսկեանց վանքերին կից՝ չքաւորներին օգնելու նպատակով: ԺԵ—ԺԶ դարերում Mons-եր կային Իտալիայի գրեթէ բոլոր քաղաքների վանքերում, ապա հետզհետէ տարածուեցին այլ երկրներ՝ Իսպանիա, Ֆրանսիա, Ֆրանդերիա, Գերմանիա, Լեհաստան եւ այլն:

Հոռմի պապերը եւս յաճախ հիմնում էին այդպիսի դրամատաներ՝ Պիոս Բ. (1458—1464), Յուլիոս Ա. (1550—1555), մանաւանդ՝ Պօղոս Դ. (1555—1559), որոնց անունով էլ երբեմն կոչուած էին նաեւ հետագայում հիմնուած Mons-երը (Օր.՝ Mons Pius, Mons Julius եւ այլն): ԺԶ դարում աշխարհականները եւս հիմնեցին Mons-եր, որտեղ որպէս գրաւ ընդունուած էին նաեւ թանկարժէք երեւ. Լոմբարդիայում հռչակ վայելած նման դրամատաների անունով էլ այդ հաստատութիւնները սկսեցին կոչուել լոմբարդներ:

Լեհահայոց դրամատուն-լոմբարդների մասին Բոհդան Եանուշի շատ արժէքատուր ու երակի ուսումնասիրութիւնից (Bohdan Janusz «MONS PIUS ORMIAN POLSKICH», 1928 թ., Լվով) տեղեկանում ենք, որ Լվովի հայոց տաճարին կից գործող եղբայրութիւնները առաջին Mons-ը ստեղծել են 1640 թ. Գրիգոր Լուսաւորէի անուամբ, երկրորդը՝ 1654, երրորդը՝ 1710 եւ վերջինը՝ 1728 թուին (էջ 15): Բ. Եանուշը ամբողջութեամբ բերում է վերջին երեք

դրամատուն-լոմբարդը, որի նպատակն էր կարիքաւոր հայրենակիցներին օգնելը՝ նըրանց շնչին տողոսներով պարաքեր տալով, առաւել աղքատներին՝ անվերադարձ նըրպատներ բաց թողնելով²⁴:

1921 թ. Լվովում հիմնուել էր «Բարի մահուան ընկերութիւն» (Բրացավա դորէյ շմիերչի), որը նպատակ ունէր հանդուցեալ աղքատների ընտանիքներին նիւթական օժանդակութիւն ցոյց տալը, չքաւորներին օգնելը եւ այլն²⁵: 1931 թ. նոյեմբերի 18-ին Հայոց թեմական միութեանը կից հիմնուած է «Գիտական եւ գրական-գեղարուեստական ընկերութիւն» (Կոլո Նաուկովո լիտերացիա ի արտըստըչնա տես՝ «Պոսլանիէց», թիւ 55, էջ 185, 188): Ընդ որում այս ընկերութիւններից շատերը մասնաձեւեր ունէին միւս հայաշատ քաղաքներում:

1930 թ. Վարչաւսոյում հիմնուել է «Հայկական կոմիտէ» (Կոմիտէտ Օրմիանսկի), որի կանոնադրութեան մէջ նշուած էր, թէ կոմիտէի նպատակը Լեհահայերին նիւթական, բարոյական եւ «իրաւական» օղնութիւն ցոյց տալն է:

Ահա այսպիսի մեծ մշակութային դործունէութիւն ծաւալած Լեհահայոց թիւը Լեհաստանում 1937 թ. 5000 էր. ունէին 3 թեմ, 8 վիճակ, 22 սպասարկու քահանայ²⁶: Բացի ութ վիճակների եկեղեցիներից ու Լվովի վանքից, հայաշատ տարբեր բնակավայրերում կային եւս 24 մատուռներ, ուր

դրամատների կանոնադրութիւնները, նրանց դրամական կարողութիւնները փաստող թուեր եւ պնդում, թէ դրանք, ի տարբերութիւն այլազգի կաթողիկէ միաբնութիւնների ստեղծածների, լրիւ եկեղեցական չէին, այլ կիսակրօնական՝ կիսա-աշխարհական, որի պատճառով ամենահարուստ դրամատներն էին Լվովում (էջ 14): Բ. Եանուշը այնուհետեւ նշում է, որ 1792 թ. հայոց չորս եղբայրութիւնների դրամատները աւստրիական իշխանութիւնների կողմից միաւորուեց մէկ ընդհանուր դրամատան մէջ եւ կոչուեց 35 կէտանոց կանոնադրութեամբ, որը շնչին փոփոխութիւններով այդ լոմբարդին ծառայել է մինչեւ 1930-ական թուերի վերջը, այսինքն՝ մինչեւ փակուելը:

²⁴ Նոյնը, թիւ 13—15, էջ 103—104, 1928, նաեւ՝ Դ. Կայետանովիչի նշվ. աշխ., էջ 49—50:

²⁵ Դ. Կայետանովիչի նշվ. աշխ., էջ 53:

²⁶ Słownik Historii Polski, Վարչաւս, 1973 թ., էջ 794 (պէտք է նկատի ունենալ, որ այս թիւը ցոյց տալիս ո՛չ թէ հայերի թիւը, այլ Լեհահայ եկեղեցու հետեւորդների թիւը, որոնց մէջ կարող էին լինել նաեւ այլազգիք):

շարաթ եւ տօն օրերին Լեհահայ քահանայք գնում էին Ս. պատարագի²⁷:

Լեհահայութիւնը դիւսաւորապէս կենտրոնացած էր Լվով, Տրամենիէց, Ստանիսլավով, Եազլովիէց, Բժեթեանի, Բրոդի, Կուտի, Լըժիէց, Սնիատին, Հորոգենիկ, Դրոհորէչ, Ժըվաչով, Ժուկովա, Զոլոչեւ բնակավայրերում: Ամբողջ Լեհահայ համայնքը կառավարում էր Լվովում գումարուող հայոց թեմական խորհուրդը, որի նախագահն էր արքեպիսկոպոսը: Լեհահայ արքեպիսկոպոսը, որպէս ինքնուրոյն ծիսակարգի եկեղեցու գլուխ, անմիջականօրէն ենթարկուած էր Հոռմի պապին, այսինքն՝ ենթակայ էր Լեհաստանի կաթողիկէ եկեղեցու պետ կարգինալին²⁸:

Քանի որ Լեհահայոց կաթողիկէ եկեղեցու իրաւական դրութեան ու ծիսակարգի, եւ մանաւանդ նրանց Հոռմի հետ միութեան մասին մեր պատմագիտութեան մէջ միակողմանի պատկերացում կայ, անհրաժեշտ ենք համարում շատ համառօտ ցոյց տալ այդ եկեղեցու սկզբնաւորման ու հետագայ փոփոխութիւնների ճանապարհը:

Հայագիտութեան մէջ իշխող կարծիքը միութիւնը կապում է միայն Նիկոլ Թորոսելիչ եպիսկոպոսին՝ Լեհահայերի Հոռմի հետ միութիւնը սկսելով 1630 թուականից²⁹ ու աւարտելով 1666 թուին: Մինչդեռ Լեհահայոց միութիւնը աւարտուել է ԺԵ դարավերջին (հետեւաբար, նրանք միութեան ղեմադարձել են ոչ թէ 40—50 տարի, այլ աւելի քան 60 տարի)³⁰, իսկ Նիկոլ Թորոսովիչն էլ

²⁷ 1887 թ. հայերի թիւը Լեհաստանում 4500 էր, ունէին 10 վիճակ, 9 եկեղեցի, 17 քահանայ (տես՝ TYGODNIK POWSZECHNY, շարաթաթերթ, թիւ 5, 1980 թ.):

²⁸ Լեհաստանում 1925 թուականից գործող այս իրաւական վիճակը կոչուած էր ԿՈՆԿՈՐԴԱՏ (լատ. CONCORDIA բառից, որ նշանակում է համաձայնութիւն, ներդաշնակութիւն), այսինքն՝ որեւէ պետութեան եւ Վատիկանի միջեւ կնքուած իրաւաբանական յարաբերութիւն, որը կարգաւորում է եկեղեցու իրաւական դրութիւնը տուեալ պետութեան մէջ:

²⁹ Լեհահայերին լատինացիները գործը սկսել էր դեռ ԺԴ դարից, դուրսէ աւելի վաղ, երբ «Միաբանող եղբայրները» Փոքր Ասիայում արժատներ էր դրել եւ Ուրբանոս 2 պապը 1384 թ. Լվովի դոմինիկեանների կարգադրեց իրաւական իշխանութիւն բանեցնել Լվովի հայ կաթողիկէ մեծակեանների վրայ՝ նրանց միջոցով Լեհահայերի «չարձը յաջողացնելու համար»:

³⁰ Լեհահայոց կաթողիկէ եկեղեցու պատմութեան քաջ

ո՛չ թէ Լեհահայերի վերջնական միացնողն էր, այլ որոշ զիջումների գնով երկար ժամանակ անխաթար է պահել հայադաւանութեան հիմնական կէտերը: Ս. Բարոնչի, Ա. Պավլինսկու, Թ. Գրոմնիցկու, Զ. Լեխիցկու, Գ. Պետրովիչի եւ Լեհական միւս հեղինակների կարծիքները այդ դէպքերին ժամանակակից Առ. Դավրիթեցու, Ալոյիս Պիլուի, Կղեմենս Գալանոսի տուեալներն համեմատելիս, մենք Լեհահայերի միութիւնը երեք փուլերի ենք բաժանում.

ա) Նիկոլին Լեհահայոց առաջնորդ կարգելուց մինչեւ Կղեմենս Գալանոսի Լվով գալն ու «պապական ճեմարան» բանալը (1626—1664 թթ.):

բ) Գալանոսի բացած հայոց ճեմարանի դործունէութեան սկզբից մինչեւ Նիկոլի մահը (1664—1681 թթ.):

գ) Նիկոլի մահուան տարեթուից մինչեւ Թորոսովիչի յաջորդ Վարդան Յունանեանի 1691 թ. հրաւիրած հողեւոր Սինոդի որոշումները:

Առաջին փուլում, կարելի է ասել, Լեհահայերը Հոռմի հետ չմիացան, որովհետեւ Նիկոլը պատարագամատոյցի մէջ չնչին փոփոխութիւններ կատարելով, ծիսակարգը հիմնականում թողեց նոյնը, եւ Լեհահայերը հայոց Փիլիպպոս կաթողիկոսի 1653 թ. յատուկ կոնդակ-պայմանագրով հաշտուեցին Նիկոլի եւ կաթողիկէ քահանայութեան հետ³¹: Ի նշանաւորումն այդ օրուայ, Լվովի մայր տաճարում մտցրին յատուկ տօն՝ «տօն միութեան», որի մասին՝ Լեհահայերին միացնելու համար Հոռմէն առաքուած Ալոյիս Պիլուին գրում է. «Սե արդարեւ միաբանեցան նոքա (Լեհահայերը, Ռ. Հ.) ի միմեանս, այլ ոչ ընդ Ս. Եկեղեցւոյն (կաթողիկէ եկեղեցուն, Ռ. Հ.), զի յայնմհետէ մեծաւ եւս ջերմութեամբ պաշտէին զհերետիկոսական արարողութիւնս իւրեանց³²»:

Գիտակ Գրիգոր Պետրովիչը եւս միութիւնը գնում է 1626—1688 թթ.:

³¹ Ըստ Բարոնչի, այդ կոնդակով Լեհահայերը պիտի ստաջնորդուին հայ առաքելական եկեղեցու այն դաւանութեամբ, որ եղել էր մինչեւ Յովհ. Օձնեցին (717—728 թթ.), ըստ Առ Դավրիթեցու՝ ծիսակարգը ընդհանրապէս էր փոխուած, միայն Նիկոլ Թորոսովիչին թոյլատրուած էր պատարագին յիշատակելու նաեւ Պապի անունը:

³² «Բոնի միութիւն», էջ 27, Ս. Պետերբուրգ, 1884 թ.:

1664 թ. Հոռմից Թէատինները ուխտի անդամ Գալանոսը զալիս է Լվով, կաթողիկէ հայ քահանաներ պատրաստելու համար բացում է հայկական դպրոց, եւ սկսում է միացումի երկրորդ փուլը: Այդ տարիներին պատարագի մէջ հետզհետէ արմատաւորւում է գինուն ջուր խառնելու ծէսը, որը հայադաւան եկեղեցին կաթողիկէ եկեղեցուն անջատող գլխաւոր խորհուրդներից էր: Թէատինեանների կողմից վերոյիշեալ «Պայմանագրի» խախտումները լեհահայերին ու Թորոսովիչին ստիպում են ընդդիմանալ: 1666 թ. մայիսին Գալանոսի մահը էլ աւելի է աշխուժացնում հայերին, Թորոսովիչը վճռում է փակել՝ Գալանոսի բացած հայոց ճեմարանը, բայց Թէատինեան բարձր հոգեւորականութեան ջանքերով (Պիզնատելի եւ միւսներ) դպրոցը վերաբացւում է: Դրա դիմաց Թորոսովիչը դպրոցի աշակերտներին արդելում է պատարագ մատուցել, որովհետեւ, «նըրանք չէին պահում հայոց հիմնական ծէսերն ու խորհուրդները» (Բոնի միութիւն, էջ 99): Լատին հոգեւորականութեանը մեծ դժուարութիւնների ու զոհողութիւնների գնով մի կերպ յաջողւում է մեկուսացնել Թորոսովիչին ու 1668 թ. ղրկել Պապի մօտ: Պապը նրան բարձր պաշտօններով, ոռճիկով, շքանշաններով եւ այլ պատիւներով 7 տարու չափ պահում է մօտը: (Թորոսովիչը Հոռմ էր ուղեւորուել նաեւ 1634—1635, 1643 թթ.: Տես՝ Տըզդընիկ Պովչեկինի, թիւ 5, 1980 թ.: 1674 թ. Թորոսովիչին յաջողւում է մի կերպ դառնալ Լվով: Թէեւ այդ ընթացքում ժամերգութիւնն ու երաժշտական հատուաները հիմնականում մնացել էին նոյնը, բայց արդէն հայոց պատարագի մէջ «չալումներ» էին մտցրել:

Լեհահայերի Հոռմի հետ միութեան վճռական փուլը սկսուեց Նիկոլ Թորոսովիչի մահից յետոյ՝ Վարդան Յունանեանի ձեռքով: Չնայած Հոռմը հեռակայ Վարդան Յունանեանին էր նշանակել լեհահայոց եկեղեցու պետ, բայց «ունիա»ն չընդունած լեհահայերը 1683 թուին Կամենեց Պոդոլսկից եկած իրենց խոհակից Եան Բերնարդովիչին (Բեռնատովիչ) կարողանում են աւելի քան չորս տարի (ոմանց կարծիքով՝ 5—6), ղնել Լվովի թեմակալի գահին՝ մինչեւ Վարդան Յունանեանը նրան 1687 թուին կարգալոյծ

չի անում եւ չի վտարում եկեղեցական գործունէութիւնից³³:

Ինչպէս տեսնում ենք, 1630 թուից 53, իսկ 1666 թուից 17 տարի անց Լվովի հայոց թեմը 4—5 տարով կրկին անցնում է ունիայի հակառակորդների ձեռքը, այսինքն՝ լեհահայերի մաքառումը միութեան դէմ տեսել է աւելի քան 60 տարի եւ աւարտուել Վարդան Յունանեանի ձեռքով: Յունանեանը Հոռմի պապական ճեմարանն աւարտելուց եւ աստուածաբանութեան դոկտորի կոչում ստանալուց յետոյ Հայաստան էր գնացել Հոռմի հետ միութիւն տարածելու, ուր հալածանքներ էր կրել հայոց Եղիազար կաթողիկոսից (1687 թ.): Հայաստանից Լվով գալուց եւ Բերնարդովիչին դահլնկէց անելուց յետոյ, սա 1680 թ. հրաւիրում է լեհահայ եկեղեցու Սինոդի նիստ, որտեղ վերջնականապէս վըճրուում է լեհահայ եկեղեցու պատարագի լատինացումը, անկախութիւնը էջմիածնից եւ հպատակութիւնը Հոռմի պապին (Բարոնչ, Լեխիցի, Պետրովիչ եւ միւսներ): 1691 թ. Սինոդը հռչակեց լեհահայ եկեղեցու նոր ծիսարանն ու ծիսակարգը՝ խմբադրուած Յունանեանի ձեռքով, հաստատուած՝ Հոռմում: 1699 թ. հրաւիրուած Սինոդի որոշումով լեհահայ եկեղեցում քարոզը սկսեցին լեհերէնով տանել³⁴: Բայց ժամասացութիւնը ամբողջովին զրարար մնաց մինչեւ ԺԹ դարակէս, երբ ժամասացութեան մէջ եղած աղօթքներն ու երգերը զրարարի փոխարէն «կամաց—կամաց երգել սկսեցին լեհերէն»³⁵:

Այսպիսով, լեհահայերի վերջնական

³³ S. BARĄCZ, ŻYWOTY SŁAWNYCH ORMIAN W POLSCE (Լեհաստանի հռչակաւոր հայերի կենսագրութիւնը), էջ 77, 1856 թ., Լվով:

³⁴ Որպէսզի աւելի յստակ պատկերացնենք միութեան դէմ լեհահայերի դիմադրական ուժը, մի քանի փաստեր բերենք: Ամբողջ լեհահայոց թիւն այդ ժամանակ երեք հազարից չէր անցնում, ունէին 22 եկեղեցի, 20 քահանայ («Բոնի միութիւն»), իսկ միութեան դէմ պայքարի դրօշակիւր Լվովի հայերը 1648 թ. ունէին ընդամէնը 147 տուն, 1654 թ.՝ 73 տուն (տես Բ. Եանուշի նշվ. աշխ., էջ 13): 1763 թ. 15 միլիոննոց Լեհաստանում հայերն ունէին 15 եկեղեցի, 41 քահանայ եւ 3241 ծխական: Այսպիսով՝ «ամբողջ Լեհաստանի բնակչութեան 0,023 տոկոսը կազմող հայերը» կարողանում են 60 տարուց աւելի մաքառել լատինացման դէմ (հմտ. «Տըզդընիկ Պովչեկինի», թիւ 15, 1980 թ.):

³⁵ FR. ZACHARIASOWICZ, WIADOMOŚĆ O ORMIANACH W POLSCE (տեղեկութիւններ լեհահայոց մասին), Լվով, 1842 թ., էջ 68:

միութիւնը Հոռմի հետ սկսուեց ու աւարտուեց Վարդան Յունանեան կաթողիկոսի ձեռքով: (2 դար յետոյ, Լեհահայոց ծիսակարգի եկեղեցի հիմնելու խոստումներով լատին կղերը ԺԹ դարի 50—ական թուերին սկսեց նոր արշաւ, այս անգամ «լեհահայոց ծիսակարգի» եկեղեցու դէմ՝ նպատակ ունենալով այն ամբողջովին ցուլել կաթողիկէ եկեղեցուն (լատինացնել) եւ վերացնել լեհահայ արքեպիսկոպոսութիւնը: Բայց այդ արշաւը հանդիպեց լեհահայերի վճռական դիմադրութեանը եւ մարեց):

Լեհական կաթողիկէ եկեղեցին, այսուամենայնիւ, տարբերութիւններ ունէր լատինականից: Ամենազլխաւորն այն էր, որ այն ո՛չ թէ ԼԱՏԻՆԱԿԱՆ եկեղեցի էր, այլ Հոռմին «ՄԻԱՅՍՄ» «ինքնուրոյն» եկեղեցի, որի պատճառով պատարագամատոյցը ո՛չ թէ աշխարհի բոլոր կաթողիկէ եկեղեցիներին նըման լատիներէն էր, այլ դրարար: Կային նաեւ որոշ ծիսական տարբերութիւններ: Այս բոլորից ելնելով լեհահայոց եկեղեցուն Հոռմը պաշտօնապէս կոչում է «Հայոց ծիսակարգի եկեղեցի»:

Չնայած իր հօտի սակաւութեանը, հայոց արքեպիսկոպոսը պատրիարքութեան իրաւունք ունէր եւ ենթարկուած էր միայն Հոռմի պապին (Նիկոլ Թորոսովիչին Ուրբանոս Բ պապը 1635 թ. տուեց արքեպիսկոպոսի տիտղոս, որը եւ տարածուել էր նրա բոլոր 11 յաջորդների վրայ³⁶):

Հայ արքեպիսկոպոսները միշտ էլ մեծ հեղինակութիւն են վայելել Լեհաստանում եւ Հոռմում, իսկ նրանցից Աուգուստինովիչ, Ստեֆանովիչ, Իսակովիչ եւ Եուզեֆ Թէոդորովիչ արքեպիսկոպոսները համարուել են լեհ աստուածաբանութեան լուսադոյն ներկայացուցիչներից եւ լեհ ժողովրդի մշակութային ու ազատագրական գործիչներից: Առանձնապէս հռչակաւոր էր լեհահայ եկեղեցու վերջին պետ, մեծահռչակ հրապարա-

³⁶ Անհրաժեշտ ենք համարում այստեղ ղնել բոլոր այդ արքեպիսկոպոսների անուններն ու նրանց գահակալութեան տարեթուերը: Նիկոլ Թորոսովիչ (1635—1681), Վարդան Յունանեան (1686—1715), Եան Աուգուստինովիչ (1715—1751), Եակոբ Աուգուստինովիչ (1752—1783), Եակոբ Թումանովիչ (1783—1790), Եան Սըմոնովիչ (1799—1816), Կայետան Վարթեքսովիչ (1817—1831), Սամուէլ Ստեֆանովիչ (1831—1858), Գեղարթ Շըմոնովիչ (1858—1875), Գեղարթ Ռոմաշկան (1876—1881), Իսակ Իսակովիչ (1882—1901), Եուզեֆ Թէոդորովիչ (1901—1938):

կախօս—իմաստասէր, հասարակական—քաղաքական գործիչ, լեհ ժողովրդի ազատագրական պայքարի գործուն մասնակից, լեհական սէյմի անդամ (նշանաւոր ճառ է արտասանել 123 տարուայ ընդմիջումից յետոյ գումարուած լեհական հանրապետութեան առաջին սէյմի անդամների նիստին), Եուզեֆ Թէոդորովիչը (1864—1938 թթ.): Լեհ հասարակութիւնը ժամանակին նրան «ոսկրերան քարոզիչ», «մեծ հայրենասէր» եւ այլ տիտղոսներով է որակել:



Եուզեֆ Թէոդորովիչը ծնուել է Հորդանակայի մօտի Ժըվաչով հայաշատ գիւղում. ծնողները գտարիւն լեհահայեր էին՝ Գրիգոր Թէոդորովիչ եւ Գերտրուդ Օհանովիչ:

1901 թ. մայիսին, Իսակովիչ արքեպիսկոպոսի մահուանից յետոյ, լեհահայ համայնքը նրան ընտրում է եկեղեցու զլուխ: Նոյն թուի դեկտեմբերի 16—ին 37—ամեայ Թէոդորովիչը Հոռմի Լեւոն ԺԳ պապից ստանում է արքեպիսկոպոսութեան աստիճան:

Հրապարակապիւր ու քաղաքական գործիչ լինելուց բացի, Թէոդորովիչը նաեւ եւրոպահռչակ աստուածաբան էր: Գրել է գլխական բազմաթիւ աշխատութիւններ, ինչպէս նաեւ զրական ստեղծագործութիւններ,

որոնցից «Յիսուսի հետ» գործը յղացքով ու հուլիսի 1908—1928 թթ. նորոգել է տալիս Լվովի հայոց տաճարը (Հրաշալի որմնանդրանքների հեղինակն էր նշանաւոր նկարիչ Հենրիկ Ռոզենը), 1911 թ. Լվովի համալսարանի պատուակալ դոկտոր էր, 1922 թ-ից լեհական սէյմի ու սենատի անդամ: 1935 թ., երբ դադարեց «Պոսլանիէց»-ը, նա լեհահայերի համար հիմնեց «Գրեգորիանա» հանդէսը՝ «Թեմական գործեր» յաւելուածով: Ե. Թէոդորովիչը թաղուել է Լվովի հայոց տաճարի բակում:

Երկրորդ աշխարհամարտը անբուժելի հարուած հասցրեց նոր-նոր կազմակերպութիւն ու դադութ դարձող լեհահայ համայնքին: Լվովը եւ Արեւմտեան Ուկրաինայի միւս հայաշատ քաղաքները ձեռքից ձեռք անցնելով դատարկուեցին հայերից, որոնց մի մասը ոչնչացաւ աքսորներում, բանտերի մէջ ու համակենտրոնացման ճամբարներում, իսկ փրկուածները սփռուեցին Լեհաստանի, Արեւմտեան Ուկրաինայի եւ Արեւելեան Եւրոպայի ու Ամերիկայի քաղաքներով մէկ:

Չնայած ցրման պատճառով լեհահայութեան համակենտրոնանալու եւ պահպանուելու բնազդը տեղի տուեց, բայց, այնուամենայնիւ, նրանք կարողացան պահել ինքնուրոյնութիւնն ու սեփական դէմքը, որպէսզի հետագայում ոյժ գտնէին հետզհետէ համախմբուելու իրենց եկեղեցու շուրջը: Կրակով, Գդանսկ եւ Գլիվիցէ քաղաքների մէջ ձեռք բերեցին մատուռներ, ուր հավաքուեցին լեհահայ քահանաներ՝ Եակուբովիչը, Կազիմիր Ռոզման, նոր բնակավայրերում եւս պահպանել էին իրենց վաղեմի սովորութիւնը՝ շաբաթ եւ կիրակի հայաշատ գիւղերը շրջելով կատարում էին լեհահայ եկեղեցու ծէսերը՝ վաղեմի աւանդութիւնները լեհահայոց մէջ վառ պահելու ձգտումներով:

1937 թ-ին ունեցած 22 քահանաների ու 30-ից ավելի եկեղեցիների ու մատուռների դիմաց լեհահայերը 1948 թ. ունէին 7 քահանայ, 1 եկեղեցի (Գդանսկի Պողոս Պետրոս

եկեղեցին) եւ երկու մատուռ, մէկը՝ Կրակովում (Վավել բերդի տակ), միւսը՝ Գլիվիցէում: Այսօր նրանք ունեն 2 քահանայ, երկու մատուռ, մէկը՝ Գդանսկի Պողոս Պետրոս եկեղեցու կողքին, միւսը՝ Գլիվիցէի մատուռը: Խօսք կայ վերաբացել Կրակովի հայոց մատուռը, որը 1973 թ. փակուել էր այդ մատուռի քահանայ Եակուբովիչի մահուան պատճառով:

Հային յատուկ դիմանալու եւ օտարացման դէմ մաքառելու բնատուր առաքինութիւնը բաւական բնորոշ է նաեւ լեհահայութեանը, որոնք 200 տարուայ անընդհատ հարուածներից, բոլոր տեսակի ճնշումներից յետոյ էլ՝ դեռ իրենց մէջ պահել են համախմբուելու եւ ինքնազիտակցութեան դալու միտումներ, եւ այդ միտումը, ինչպէս իրենք են պնդում, լեհահայերին չի՛ խանդարում քաղաքականապէս հայրենասէր, լեհեր լինելով, հոգեպէս հայ մնալ:

Լեհահայերն իրենք ա՛յն կարծիքին են, թէ իրենց ինքնուրոյնութիւնը, համախմբուածութիւնն ու զարթօնքը կախուած է եղել Լեհաստանի անկախութիւնից: Ո՛րքան հզօր ու անկախ է եղել Լեհաստանը, ա՛յնքան հզօր է եղել լեհահայ դադութը: 1795 թ. Լեհաստանի վերջին բաժանումից յետոյ, երբ Լեհաստանը մասնատուեց ու վերջնականապէս կորցրեց անկախութիւնը, լեհահայ դադութը սկսեց խամրել ու թուլանալ: 1918 թ. Լեհաստանի պետականութեան վերականգնումից յետոյ լեհահայերը կրկին սկսեցին աշխուժանալ. այդ աշխուժացումը ընդհատուեց երկրորդ աշխարհամարտով, լեհահայութիւնը դատարկուեց իր բնօրրանից ու փրուուեց աշխարհով մէկ: Այսօրուայ անկախ Լեհաստանում հայերը կրկին վերակենդանացման նշաններ են ցոյց տալիս: Իրենց քաղաքականապէս լեհեր համարելով, ամբողջովին ու բոլորանուէր տրուելով հիւրընկալ ժողովրդի հոգեւոր, տնտեսական ու քաղաքական առաջընթացները, չեն մոռանում իրենց վաղեմի նախնիներին: Եւ այդ գործում նրանց օգնում են հէնց լեհ բարեկամները, որոնցից շատերը այսօրուայ ու երեկուայ Հայաստանի պատմութեան, արուեստի, ճարտարապետութեան եւ դրականութեան մասին հանդէս են գալիս յօդուածներով, ուղեգրութիւններով ու գրքերով:

Լեհաստանում այսօր ապրում են մօտ 10 հազար հայկական ծագում ունեցող լե-

հեր: Մենք «հայկական ծագմամբ լեհեր» ենք ասում են, ի նկատի ունենալով այն իրողութիւնը, որ այսօրուայ լեհահայերն իրենց հէնց այդպէս են համարում՝ ի բաց առեալ մի քանի տասնեակ 50—80-ամեայ անձանց: Նրանք ապրում են Լեհաստանի գրեթէ բոլոր խոշոր քաղաքներում, համեմատաբար շատ են Վարշաւա, Կրակով, Վրոցլավ, Կատովիցէ, Գդանսկ, Սոպոտ, Գլիվիցէ, Չաժնոսոյէ, Պոզնան, Բժեզ, Շիլիդնիցա, Օլավա եւ այլ բնակավայրերում: Հայկականութիւնը համեմատաբար ընդգրկուած է Կատովիցէի, Վրոցլավի եւ մասամբ նաեւ Գլիվիցէի ու Կրակովի հայերի մէջ: Սա այն պատճառով, որ նրանք (մանաւանդ, Վրոցլաւի ու Կատովիցէի վոյեվոդութիւններում ապրողները), հիմնականում Կուտեցիներ են, իսկ Կուտին լեհահայերի այն միակ օջախն էր, ուր մինչեւ վերջ էլ անխառն պահպանել էին լեհահայոց աւանդներն ու կենցաղը, խօսում, երգում եւ աղօթում էին իրենց բարբառով:

Այս չորս քաղաքների ու նրանցից 100 կմ. շառուղով բնակավայրերում ապրում են մօտ 2—3 հազար հայեր. յատկապէս շատ են Վրոցլավի շրջակայ գիւղերում: Այսօր իսկ նրանց մէջ կարելի է գտնել տարիքաւոր հայերի, ովքեր իրենց հայ են համարում, թեթեւակի յիշում են Կուտիի բարբառը, պիտեն հայերէն աղօթքներ, եփում են զուտ հայկական կերակուրներ (տես «Հայաստանի աշխատաւորուհի» ամսագիր, 1977 թ., թիւ 2-րդ), նոյնիսկ փորձում են լսել հայերէն ռադիոհաղորդումներ:

Լեհահայերի բանահիւսութեան, կենցաղի եւ ազգագրութեան հանրազիտարան է Կատովիցէ քաղաքում (Կոստեուչկոյի փողոց 66) ապրող 60-ամեայ տիկին Մոյզեսովիչը: Նա թեթեւակի յիշում է Կուտիի հայոց բարբառը, թերեւս այն միակ լեհահայն է, որ դիտի լեհահայոց մէջ մի ժամանակ տարածուած բազմաթիւ առակներ, պատմութիւններ, հէքիաթներ, աւետիսներ եւ այլն: Լեհահայերի բանահիւսութիւնով զբաղուողներ Կազիմիր Ռոզման, Մ. Մոյզեսովիչը, Ա. Պիսովիչը եւ միւսները հէնց տիկին Մոյզեսովիչից են ձայնագրել ու լատիներէն տառագրութեամբ առանձին պրակներով, գրքոյկներով կամ դիտական հանդէսներում տպագրել լեհահայերի բանահիւսութեան փրկուած կտորները:

Աննա Մոյզեսովիչի նպաստը մեծ է նաեւ

Օպոլցի երաժշտագէտ Ջրիզնեւ Կոսցեուվի 1976 թ. հրատարակած «Լեհահայերի երաժշտութիւնը» արժէքաւոր աշխատութիւնը գրուելու բերելու գործում. այդ գրքոյկում գետեղուած աւետիսների մի մասը գրքոյկի հեղինակը ձայնագրել է նրանից:

Հայերի ու Հայաստանի մասին գրքեր ու յօդուածներ են գրել Մոնիկա Վարնենսկան (Շչեթկա նա Արարատ — Կածան Արարատի վրայ, Վարշաւա, 1977 թ.), Մաչիէյ Պոպկոն (Գուրը պող պոկչիենժըցեմ — Լեռները կիսալուսնի ներքոյ, Վարշաւա, 1974 թ.), Անդժեյ Մանդալեանը (Ստարա պոէզյէ Օրմիանսկա — Հայ հին քերթութիւնը, Վարշաւա, 1970 թ.), եւ ուրիշներ: Առանձնապէս յաջող է գրուած վարշաւացի հրապարակագիր ու լրագրորդ Ռոմուալդ Կարաչի «Շուկամ ռայու» (Դրախտն եմ փնտրում) ստուար դիրքը (ունեցել է 2 հրատարակութիւն՝ 1975 եւ 1979 թթ.), որը թարգմանուել է նաեւ չեխերէն, անգլերէն, հունգարերէն: 1965 թ. Լուբլինում լոյս տեսաւ լեհ պատմաբան Միրոսլավա Չալիսկա-Դուբասովայի «Չաժնոսոյի հայերը եւ նրանց դերը Լեհաստանի ու արեւելքի առեւտրական եւ հոգեւոր փոխանակումների մէջ» գիրքը, (Օրմիանիէ Չամոյսը ի իսրոյա վ վրմիանիէ հանդուվեյ ի կուլտուրայնեյ միենժը Պոլսկոն ա վսխուդիեմ. Լուբլին, 1965 թ.): 1977 թ. «Համընդհանուր պատմութիւն» մատենաշարով տպագրուեց տիկին Միրոսլավա Չալիսկա-Դուբասովայի «Հայոց պատմութիւն»³⁷ 328 էջանոց ուսումնասիրութիւնը, որը հեղինակի պնդմամբ լեհ պատմագիտութեան մէջ Ուրարտուից մինչեւ մեր օրերը ընդգրկող Հայաստանի քննական պատմութիւնը շարադրելու առաջին փորձն է:

60-ական թուականներից այս կողմ բաւական աշխուժացել է հայ դրականութեան թարգմանութիւնը լեհերէնի:

Չանազան լրագրերում եւ ամսագրերում (Լիտերատուրա, Կուլտուրա, Լիտերատուրա նա շվիեչիէ, Փչեզլոնդ Օրիենտալիստըչնի, Տըզոդնիկ Պովչեխնի, Կուրիէր եւ այլն), տպագրուել են Մեսրոպ Մաշտոցի, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մազիստրոսի, Յովհաննէս Երզնկացու, Ներսէս Ծնորհալու, Նահապետ Քուչակի, Թումանեանի, Չարեն-

³⁷ M. Zakrzewska Dubasowa «HISTORIA AR-MENII» 1977., Վրցլավ-Վարշաւա:

ցի, Ա. Բակունցի, Իսահակեանի, Հր. Քոչարի, Պ. Սեւակի, Յ. Շիրազի, Ս. Կապուտիկեանի, Գ. Էմինի, Վ. Պետրոսեանի, Հր. Յովհաննիսեանի, Մետաքսէի, Վ. Պողոսեանի եւ այլոց գործերը: Առանձին գրքերով լոյս են տեսել «Սասնայ ծռերից» հատուածներ (1967 թ.), Իսահակեանի (1975 թ., 1979 թ.), Չարենցի (1962 թ.), Գ. Էմինի (1966 թ.), Ինչպէս նաեւ միջնադարեան քերթողների գործերի ժողովածուները, Ստ. Զորեանի «Մի կեանքի պատմութիւն» վէպը, Պ. Պոռչեանի «Հացի խնդիրը» (1951 թ.), Վ. Անանեանի «Սեւանի ափին» վէպը (1951 թ.) եւ պատմաճշմանի ժողովածուները (1954 թ.), Շիրվանզադէի «Բառսը» (1956 թ.), Ն. Չարեանի «Հացաւանը» (1951 թ.), Յովհ. Ղուկասեանի «Փոքրիկ վրիժառուն» (1953 թ.), Հրանտ Մաթեոսեանի վիպակների բաւական ստուար ժողովածուն (380 էջ), Զորայր Խալափեանի «Ո՞րտեղ էիր մարդ Աստծոյ» վէպը (1980 թ.) եւ այլն: Հայագէտ Բ. Գեմբարսիկին տարբեր ժամանակներում «Ռոջնիկ Օրիենտալիստընի» հանդէսում տպագրել է Աբրիգ Աւագեանի, Հր. Քոչարի, Շ. Թաթրիկեանի, Խ. Գիւրնաղարեանի պատմաճշմանքները, ինչպէս նաեւ Յովհ. Թումանեանի «Մի կաթիլ մեղր» հէքիաթը:

Ուշագրաւ հրատարակութիւն է հայկական եւ վրացական առականների պատկերազարդ ժողովածուն, որը բնագրերով ու դերանց գուգադեր լեհերէն թարգմանութիւններով 1962 թ. հրատարակել էր Կազիմիր Ռոջոնի՝ Անդժեյ Պիսովիչից առաջ Կրակովի համալսարանի հայոց լեզուի դասախօսը: (Նոյն հեղինակը 1958 թ. հրատարակել է Լեհաստանում գտնուող հայերէն եւ վրացերէն ձեռագրերի ցուցակը), 1960—63 թթ. Կրակովում փոքրիկ գրքոյկներով լոյս է ընծայել Կուտիի հայոց բանահիւսութեան նըմոյշների բնագրերը (լատինատառ՝ գուգադեր Փրանսերէն թարգմանութեամբ):

Սակայն արդարութիւնը պահանջում է ասել, որ բնագրից թարգմանուած չլինելու պատճառով (թարգմանում են անգլերէնի, իտալերէնի, ֆրանսերէնի, ռուսերէնի միջոցով) այդ թարգմանութիւնները, մասնաւոր, հայ նորագոյն գրականութիւնը, առանձին յաջողութիւն չեն ունեցել՝ մեր նոր գրականութեան մասին լեհ ընթերցողին սոսկ պատկերացում տալուց բացի:

Ուրախալի է, որ վերջերս նկատուում են

մեր հեղինակներին բնագրից թարգմանելու միտումներ: Այս իմաստով լաւ դործ է անում հայագէտ Ա. Պիսովիչը: Պ. Սեւակից արած նրա յաջող թարգմանութիւնները («Դիմակահանդէսի գլխաւորը», «Նորորեայ աղօթք»), լեհ ընթերցողների շրջանում մեծ հետաքրքրութիւն են առաջացրել Պ. Սեւակի քերթութեան նկատմամբ: (Նա թարգմանել է նաեւ Յ. Թումանեանի «Բաջ Նաղար» հէքիաթը եւ Ա. Իսահակեանի «Յաւէրթութիւն» պատմաճշմանը, որոնք տպագրուել են «Կուլտուրա» շաբաթաթերթում (1978 թ. թիւ 39 եւ 1980 թ. թիւ 1):

Այժմ տպագրութեան ընթացքի մէջ է Պ. Սեւակի հատընտիրը եւ «Հայ գրականութեան անթոլոգիան» (սկզբից մինչեւ մեր օրերը): Առաջիկայում թարգմանել են ծրարագրում հայ գրողների պատմավէպերից:

Լեհաստանում թարգմանում են նաեւ հայոց պատմութեանն ու մշակոյթին վերաբերող օտարալեզու աշխատութիւններ (Մարշալ Դաւիթ Լանգի «Հայաստանը քաղաքակրթութեան օրրան» գիրքն օրինակ, Վարչ. 1975 թ.): Որոշ տեղաշարժեր են նըկատուում լեհահայոց պատմութեանն ու մշակոյթին վերաբերող աշխատութիւններ եւ ուսումնասիրութիւններ ստեղծելու առումով: Արդէն վաստակաւոր հայագէտների աշխատութիւնները³⁸ կողքին, ուշագրութեան են

³⁸ Պրոֆ. պրոֆ. Տրիարսկու, Ալուշկեւիչի եւ այլոց յօդուածները: Słowa Eug. Sluszkiewicz «Formuła przysięgi starszych Lwowskie gminy Ormiańskie, Wg. Kodeksu praw nadanych ormian przez Zygmunta» I w r. 1519 (N 1916, ossolinium). «Rocznik Orientalistyczny», T XXX, էջ 109—118: Նոյնի «Orm. Minasowicz (Minasowicz I. T. P.)» «Język Polski» (ամսագիր) N 36, էջ 42—44: Նոյնի «Sajat Nowa», «Problemy» (ամսագիր), N 12, էջ 738—742, 1963: Նոյնի «Trzy dokumenty ormiańskie» z. w. XVII «Rocznik Orientalistyczny», T 27, zes. 2, T 28, zes. 2, 1965:

Kazimierz Roszko, «Ormianie polscy jak autorzy słowników ormiańskich», Rocznik orient. 1962, N 4: Reychman Jan, Tryjarski Edward, «Z. Leksykografii Ormian Polskich», XVII i XVIII w, w: Նոյն հանդէսում, 1964 N. 4: Reychman Jan, «badaniem nad językiem ormiansko-kipczacki i dziejami ormian Polskich», նոյն հանդէսում, 1971 N. 1. Baranowski Bohdan, «Ormianie w służbie dyplomatycznej Rzeczypospolitej» «Myśl Karaimska» (Գիտական-հասարակական Տարեգիրք) T 1 (1945—1946) Wrocław: Tadeusz Pobożnik, «Przyczynki do Historii Języka

արժանի կրակովցի Հենրիկա Աուգուստընովիչ — Չիեչերսկայի ընդարձակ յօդուածները լեհահայ մշակութային-քաղաքական գործիչների մասին³⁹, նոյն հեղինակը ուսումնասիրութիւն է գրում լեհահայ օրիորդաց դպրոցների պատմութեան մասին: Կատուվիցեում ապրող լեհ մասնագէտ Եդուարդ Ռուժիցկին գրադուում է նաեւ Լեհաստանի հայ գրքի ու տպագրութեան պատմութեամբ: Ուշագրաւ է նրա «XVI—XVII դդ. Լվովի հայ գրքի պատմութեան ուսումնասիրութեան վիճակը եւ խնդիրները» յօդուածը, ուր կարեւոր նիւթեր կան նաեւ այդ հարցով գրադուող օտար գիտնականների, մասնաւորապէս 1920—30-ական թուերի լեհ մասնագէտներ Յ. Սկոչեկի եւ Ա. Ենջեյովսկու մասին, որոնք շօշափելի նպաստ ունեն այդ հարցի ուսումնասիրութեան մէջ (տես Rocznik biblioteczne Rok XXII, ZESZYTY 1—2, էջ 110, WROCLAW-WARSZAWA 1978 թ.): Շահեկան աշխատութիւն է Օպոլցի երաժշտագէտ Զբիգնեւ Կոսցեուլի «Լեհահայոց երաժշտութիւնը» գրքոյկը⁴⁰, ուր համակարգի են բերուած լեհահայոց երաժշտութեան զարգացման փուլերը, տրուած են այն բոլոր երաժշտական կտորները, որ դրաւոր աղբիւրներով, աւանդաբար կամ զանազան տեղերում տպագրեալ հասել են մինչեւ մեր օրերը: Կարեւոր են գրքում զետեղուած լեհահայոց բանահիւսութեան փշրանքները հանդիսացող ժողովրդական աւետիաները, որոնց մի մասի եղանակներն ու խօսքերը փաստօրէն Կոսցեուլին է փրկել մոռացումից:

1978, 1980 եւ 1981 թթ. Օպոլցեում լոյս տեսան նոյն հեղինակի նոր հրատարակուածները՝ ԺԹ դարավերջին կազմուած «Լեհահայկական երգարանը» (որտեղ զետեղուած հայկական դասական, ժողովրդական, դուսանական եւ ազգային բազմաթիւ ձայնանընուած երգերը մի աւելորդ անգամ ապա-

ormian polskich» «Sprawozdzenie z czynnosci i Posiedzen Pau» ժողովածոյի մէջ, Կրակով, 1952: Ludwik Zabrocki, «Usilnienie i lenicja w językach indoeuropejskich i w ugrofinskim», Պոզնան, 1951. (Այս մենագրութեան մէջ բաւականին մեծ տեղ է յատկացուել հայերէնին Ռ. Հ.): ³⁹ «Տըգոլնիկ Պոլշէինի», 1976 թ., նո. 34, 38, Կրակով (շաբաթաթերթ): ⁴⁰ ZB. Kościów, «Muzyka polskich Ormian», 1976 թ., երկր. հրատ., 1978 թ., Օպոլցէ (տես նաեւ՝ «Մովետական արուեստ» 1978 թ., թիւ 3, դըրախօսական):

ցուցում են, որ լեհահայերը կտրուած չեն եղել մայր հայրենիքից ու մշակոյթից) «Ակնարկներ լեհ-հայկական շփումների մասին»⁴¹ գրքոյկը, ուր հեղինակը ցոյց է տալիս այն դերը, որ լեհահայերը ունեցել են այդ երկրի երաժշտական մշակոյթի պատմութեան մէջ եւ «Լեհ-հայկական երաժշտական աղբիւրներ» գրքոյկը, որը նուիրուած է հայկական շարականների ու աւետիանների Լեհաստանում կրած տեքստային ու երաժշտական փոփոխութիւններին, ինչպէս նաեւ դարասկիզբի լեհ երաժշտագէտ Բրոնիսլաւա Վուլչիկ Գէօփրիւլեանի (1890—1938)՝ հայագիտութեանը եւ լեհահայոց երաժշտութեանը նըւիրած աշխատութիւններին:

1973 թ. տպուել է Կոռնել Կժեչուուիչի «Մի գերդաստանի երկու արտագաղթի պատմութիւնը»⁴² աշխատութիւնը, ուր բազմաթիւ տեղեկութիւններ կան լեհահայ Կժեչուուիչիների գերդաստանի ծագման, Լեհաստանում նրանց տարածման մասին, մի գլուխն էլ նուիրուած է Հայաստանի համառօտ պատմութեանն ու մշակոյթին՝ հին օրերից մինչեւ 70-ական թուերի սկիզբը:

Լաւ ընդունելութիւն է գտել արդի լեհ քերթութեան նշանաւոր դէմքերից՝ Եժի Հարասիմովիչի «Բաղէաորս» բանաստեղծութիւնների ժողովածուն⁴³, որտեղ կան հայերին նուիրուած 20 բանաստեղծութիւններ (դրանցից մի քանիսը մեր թարգմանութեամբ տպագրուել է «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի 1978 թ. սպրիլի 20-ի համարում): «Անծանօթ հայուհու դիմանկարը» վերնագրով շատ գողտրիկ քերթուած ունի ականաւոր բանաստեղծ Եան Շպիլիվակը (1908—1967)⁴⁴:

Գլխիցէ քաղաքում 1977 թ. գրուել, մեքենադրեալ հրատարակուել ու լեհահայերի մէջ տարածուել է հայերէն «Այրբենարան» եւ «Ընթերցարան» գրքերը «Այրբենարանի» առաջաբանում դասադրքի հեղինակ-

⁴¹ ZB. Kościów «Polsko-Ormiańskie Muzykalia», 1978 թ., Օպոլցէ: ZB. Kościów «Polsko-Ormiańskie szkice Muzyczne», 1980 թ., Օպոլցէ: ZB. Kościów «Polsko-Ormiańskie Komunikaty Muzyczne», 1981 թ., Օպոլցէ: ⁴² «Kornel Krzeczunowicz, Historia jednego domu dwóch emigracji», Լոնդոն: ⁴³ Jerzy Harasymowicz-Broniuszyc, «Polowanie z sokołem», Kraków, 1977: ⁴⁴ Jan Śpiewak, Poezje, Վարշաւա, 1955 (Czytelnik մասնաշար):

ները լեհահայերին կոչ են անում, օգտուելով այսօրուայ փոխադրական ժամանակակից ու արագընթաց միջոցներից, յաճախակի հիւր դնալ Հայաստան, կապուել հայրենի երկրին ու նախնիներին: Այս ձեռագիրը գրքայիններից մէկական օրինակ պահուում է Մեսրոպ Մաշտոցի անուան մատենադարանում:

Նովի Սոնչ քաղաքի բնակիչ Եան (Յովհաննէս) Ազոպուովիչ-Հասսոն լեհահայ նշանաւոր գերագատան շառաւիղներից է, ըզբաղուում է նկարչութեամբ, փայտի փորագրութեամբ, բազմաթիւ մատենանիշների հեղինակ է, որոնցից 10—12 հատը Ալ. Մյասնիկեանի անուան գրադարանի աշխատակից Սպ. Ղազարեանը գետեղել է հայ նըկարիչների մատենանիշներն ամփոփող իր գրքայիններում: Ազոպուովիչ Հասսոն մի քանի եւրոպական լեզուներից զատ գիտի նաեւ գրաբար ու արեւմտահայերէն: Ունի Կիլիկեան Հայաստանի մասին պատմական աշխատութիւն: Այժմ գրում է Լվովի եւ միւս հայաշատ վայրերի հայկական հաստատութիւնների եւ ընդհանրապէս լեհահայոց գաղութի մասին աշխատութիւն: Նոյն քաղաքի բնակիչ Քիւրտի Պոնիդեւիչը գրում է լեհահոց խոհանոցի մասին գիտական աշխատութիւն:

Լեհահայ ազնուական տոհմերի ու նըրանց ծագման, տեղաշարժման եւ տարածման մասին շատ հետաքրքիր գիրք է գրում Գլիվիցէ քաղաքում բնակուող Միհալ Բոհոսեւիչը (Պօդոսեան): Կատովիցէի Երաժշտանոցի 1981 թ. շրջանավարտ Լուիզա Բարանսկան գրաղում է հայ երաժշտութեան պատմութեամբ:

Լեհաստանում Հայաստանի ու հայ մըշակոյթի այս ծաւալման շնորհիւ շատ լեհերին քնուրոյն սովորում են մեր լեզուն եւ փորձում գրաղուել հայագիտութեամբ:

Հայաստանի, հայ մշակոյթի ու գրականութեան մասին գրքերով, գրքայիններով, բանաստեղծութիւններով, յօդուածներով ու թարգմանութիւններով հանդէս են գալիս Վ. Դորբոչինսկին, Մոնիկա Վարնեսկան, Ռոմուալդ Կարաչը, Էժի Վլոզարեկը, Իդոր Շիկիբեցկին, Էժի Հարասիմովիչը, Մացիէյ Պոպկոն, Անդժէյ Մանդալեանը, Անդժէյ Պիսովիչը, Թադէուշ Ժըլիւեւիչը, Անդժէյ

Շիմանսկին, Վիտոլդ Դոմբրովսկին⁴⁵ (մահ. 1978 թ.), Մարիան Պիեխալը, Եուզէֆ Ռեչեկը, Թադէուշ Վըշովիտսկին, Թադէուշ Խրուշչիւեւսկին, Էժի Լիտովինուկը, Արթուր Մենձըթեցկին, Հ. Աուզուստընովիչ-Չեչերսկան, Եուզէֆ Չարեկը, Չրիզնեւ Սուխալը, Եժի Շոկալսկին եւ ուրիշներ:

Այսօրուայ Լեհաստանում հայագիտութեան կենտրոնը Կրակովն է, ուր ապրում են բազմաթիւ լեհահայեր՝ Պասսակասները, Բոգդանովիչները, Եակուբովիչները, Ստեֆանովիչները, Ռոշքանները, Մաշորանները եւ այլն: Կրակովի Եագիելլոնեան համալսարանի պարսկագիտութեան ամբիոնի վարիչ, աղբութեամբ լեհ, հայագէտ Անդժէյ Պիսովիչի շնորհիւ այսօր այդ համալսարանում իրանական լեզուաբանութեան մէջ խորացող ուսանողները շարունակում են առաջուայ նման անցնել հայերէն: Պիսովիչը արդէ երկու հայերէններից զատ, գիտի նաեւ գրաբար ու մի քանի բարբառներ, ահագին գործ է կատարում հայ մշակոյթը լեհահայերի մէջ տարածելու գործում:

Լեհաստանի ազգագրական ընկերութեան Կրակովի մասնաճիւղին կից 1980 թ. մարտի 24-ին լեհահայերը հիմնել են «Հայ մշակոյթով հետաքրքրուողների միութիւն» (100ից աւելի անդամ, 500ի շափ համակիրներ): Միութեան նախագահն է Միհալ Բոհոսեւիչը, քարտուղարը՝ կենսաբանական գիտութիւնների թեկնածու Թերեսա Պասսակասը, երկուսն էլ լեհահայ նշանաւոր գերագատանի շառաւիղներ: Միութեան 11 կէտանոց կանոնադրութեան 3 կէտը ազգարարում է, որ իր գլխաւոր նպատակն է հայ գրականութեան, մշակոյթի ու պատմութեան ծաւալումը Լեհաստանում: Միութիւնը մտադիր է ճշտել լեհահայերի թիւը արդէ Լեհաստանում, հաւաքել լեհահայերի ազգագրութեան ու բանահիւստութեան փշրանքները, բացայտել հայկական ծագում ունեցող լեհերի գերը երկրի մշակութային-տնտեսական կեանքում, գրաղուել լեհահայոց պատմութեան եւ մշակոյթի հարցերով, հիմնել գրադարան-ընթերցարան, միութեան անդամներին համար կազմակերպել հայերէն լեզուի դասընթացներ, կապեր հաստատել Հայաստանի

⁴⁵ Նա թարգմանել է նաեւ Առ. Դաւրիժեցու «Գիրք պատմութեանցը», որը Ա. Պիսովիչի խմբագրութեամբ լոյս կը տեսնէ 1981 թ. ապրիլին:

տանի գիտական հիմնարկների հետ, վերսկսել լեհահայոց պատմութեան ուսումնասիրութիւնը:

Այս առումով կարեւոր քայլ էր «Լեհահայ գաղութի պատմութեանն ու մշակոյթին նուիրուած առաջին գիտական նստաշրջանը», որը կայացաւ 1980 թ. ին նոյեմբերի 8—9-ը, Կրակովում⁴⁶:

Հայոց լեզուն սովորել կամեցողների համար միութիւնը 1980 թ. նոյեմբերի 10-ից կազմակերպել է դասընթացներ (շաբաթական մէկ անգամ), որը վարում է Ա. Պիսովիչը: 1981 թ. յունուարի գրութեամբ դասընթացներին մասնակցում էր 20 ունկնդիր:

Նստաշրջանին մասնակցում էին Լեհաստանի բոլոր ծայրերից հրաւիրուած 600-ից աւելի լեհեր ու լեհահայեր: Նստաշրջանում հրապարակուեց գիտական վեց զեկուցում, որոնցից առաւել արժէքաւորներն են ծերունագարդ Չեսլաւ Լեխիցկու՝ «Լեհահայերի պատմութիւնը», Միութեան նախագահ Մ. Բոհոսեւիչի՝ «Լեհահայոց ծագումնաբանութիւնը եւ զինանշանները» եւ Ա. Պիսովիչի՝ «Հայոց լեզուի եւ գրականութեան ծանօթութիւնը Լեհաստանում 19—20-րդ դարերում»: Լեհական մամուլը (Կատովիցէի Տրիբունա Ռորոտնիչան, Վարշաւայի Սլովո պոլշէինիան, Կրակովի Տըզոդնիկ Պոլշէինին եւ այլն) անդրադարձաւ այդ գիտաժողովին: Միութիւնը ծրագրում է երկրորդ գիտաժողովն անցկացնել Վարշաւայում: 1981 թ. մարտ ամսից ստեղծուել է միութեան Վարշաւայի մասնաճիւղը, որը միաւորում է մօտ 100 անդամ: Այստեղ եւս կազմակերպուել է հայոց լեզուի դասընթաց⁴⁷:

⁴⁶ «Sesja Ormiańska, Tygodnik Powszechny» շաբաթաթիւթ, N 47, 23 XI, 1980 թ.: «Ormianie w Historii Rzeczpospolitej», «Słowo Powszechnie» N 257, 28 XI 1980 թ. Վարշաւա եւ այլն:

⁴⁷ Տես նաեւ «Հայրենիքի ձայն», «Նուիրուած հայ մշակոյթին» N 1, 1/1-1981 թ.:

⁴⁸ «Հայրենիքի ձայն», մշակութային նոր միութիւն, թիւ 20 (824), 13/5-1981 թ.:

Մի յօդուածի մէջ անհնար է ընդգրկել գիտարկուող շրջանի լեհահայ գաղութի հասարակական-տնտեսական եւ ընկերային բազմաթիւ հարցերը, որոնցով ամբողջանում է ամէն մի հանրութիւն: Այս հարցը կարօտ է լուրջ ու բազմակողմանի ուսումնասիրութեան:

Մեր նպատակն էր ցոյց տալ, որ լեհահայ գաղութը ո՛չ թէ խամբել էր ԺԹ դարակէսին, ինչպէս ընդունուած է ընդհանրապէս, այլ կենսունակութիւնը պահպանել էր ընդհուպ երկրորդ աշխարհամարտի սկիզբը:

ՌԱՖԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ*, Երեւան

*ԼԵՀԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՎՐԱՅ ԳՐԱԾՍ ԿԱՐԵՒՈՐ ՅՕԴՈՒԱԾՆԵՐԻ ՑԱՆԿԸ

1. «Լոյս է տեսել Լեհաստանում» (Գրախօսութիւն Չակիեւսկա-Դուբասովայի) «Հայաստանի պատմութիւնը» գրքի, «Սովետական դպրոց», 22-09-77 թ.:
2. «Գանջարուր» (Լեհահայերի ազուրի նկարագրութիւն) «Հայաստանի աշխատակորուհի», No. 2, 1978 թ.:
3. «Ջերմ դնահատութեամբ» Ջր. Կոսցիուլի «Լեհահայոց երաժշտութիւնը» գրքի գրախօսականը, «Սովետական արուեստ» No. 3, 1978 թ.:
4. «Լեհահայոց երկու դպրոցները», «Սովետական Հայաստան» ամսագիր, 1978 թ., No. 3:
5. «Լեհ հայագէտը», «Հայրենիքի ձայն», No. 3, 17-01-1979 թ., Անդժէյ Պիսովիչի մասին:
6. «Լեհահայոց խոհանոցից», «Հայաստանի աշխատակորուհի», No. 2, 1979 թ., էջ 30—31:
7. «Հայագիտի լեհական պատմաբան Սաղոկ Բարոնչ», «Բանբեր Երեւանի համալսարանի», 1979 թ., No. 3, էջ 156—166:
8. «Ուրուագծեր 20-րդ դարի Լեհահայ գաղութի», «Բանբեր Երեւանի համալսարանի», 1981 թ., No. 3, (սոյն յօդուածի կրճատեալ տարբերակը):

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՆՆԵՐ

1. «Հայերը Լեհաստանում» (Աուզըստինովիչ-Չիլիերսկայի յօդուածը լեհական «Տըզոդնիկ Պոլշէինի» շաբաթաթիւթում), տպուել է «Արեւ» թերթում (Կահիրէ) 12 եւ 14 մայիսի 1977 թ.:
2. Ջր. Կոսցիուլի «Լեհահայոց երաժշտութիւնը» գրքից հատուածներ. «Էջմիածին» հանդէս, 1978 թ., No. 1, էջ 57—61: